

թաքում ունենան, այլև չեն կրնար կանգնիլ, քանզի զուրկ են փրկարար յոյսի տեսմիքէն։ Եղոյսը կեանք է և կեանքը յոյսան որ կը յուսայ՝ կ'ապրի, իսկ յուսահատութեան մատնուողը գտալիք կ'ըլլայ։ Հստա ամենիկացի կեղինակի մը, «Եղոյս երիտասարդական աւիւն կը նիրարկէ մարդու երակներուն մէջ, քանզի յոյսն ու երիտասարդուութիւնը միենոյն մօր զաւակներն են»։ Իսկ Պօլոս առաքեալ կ'ըսէ. «Եղոյս ոչ երբեք ամայշեցուզանե» (Հառմ. Ե. 4):

Երբեք՝ պատգամ՝ կայ նաև զարձի եկած
և հոգեսոր՝ կենքի մէջ անկում չունեցող
մէկուն համար։ Սրբագան Մատեանը կ'ազ-
դարարէ։ «Որ համարիցի հաստատուն կալ՝
զգոյն լիցի, գուցք անկանիցի» (Ա. Կորն.
Ժ. 12)։ Ան որ կը կարձէ թէ հաստատուն
կը կենայ, պէտք է զգոյն ըլլայ, որովհետեւ
կրնայ իշխալ, Մանաւանդ եթէ մէկը ան-
փորձ է՝ աւելի շուռ կ'իշխայ, և անկումը
այնքան մեծ և ահաւոր կ'ըլլայ որքան ա-
ւելի բարձրութենէն վար իշխայ։ Այս խոկ
պատճառաւ, Սուրբն Պօղոս կը զգուշացնէ
մեզ, ըստելով։ «Անի՞ւ Եւ զողուրեամբ զան-
ձանց փեկուրիսն զործեցէք» (Փիլ. Բ. 12)։
Աւստի պէտք է զգուշութիւն լնել և հեռու
կենալ պարծենկոտութենէ, իսկ եթէ ան-
կում ունեցած ենք՝ յուսահատութեան
մատնուելի։

Լաւ է կեանքի մէջ բնաւ չինալ, բայց
երբ ինկած ենք՝ քաղութիւն է զերսափին
կանգնիւ: Դժբախտ է ան՝ որ չի զգար իր
մէջը վերելքի այս փրկարար յրյալ: Ուր որ
չկայ յոյս՝ չկայ գործունէութիւն: Ճէրէմիա
Թէլլըը Կ'ընէ: «Յօյսը հրեշտակի թէերով
կը սաւառնի դէպի երկինք, և կը տանի ու
կը հասցնէ մեր աղօթքը մինչ Աստուծոյ
շնորհաց գահը»:

Ապրիլնք, առանց կորսնցնելու այն կենսանի յուսը (Ա. Գետ. Ա. 3)՝ որ հոգեւոր կեանքի վերեւոքի փրկարար սանդուին է մեզի համար:

«Առաջնորդեամ մեզ, Տէր Աստուած մեր
... չնորհօք Միածնի Քոյ Տեսան մերոյ և
Փրկչին Յիաստափ Քրիստոսի, որ եղաւ մեզ
առաջնորդ կենաց և լոյս փրկութեան» (Ժամ-
մագիստրո)։

ԴՐԱՅ Ա. ՍԱՐԱԶԵԱՆ

ԲԱՆԱԳՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻՆ

ՀԵՏԱԳԱՎԱՐԱԿԱՆ ՊՐԵՍԵՐՎԱՏՈՒՐ

1

Նարեկացու ստեղծագործութիւնը իրեւ
ուսումնառութեան աղբիւր որոց կողմէրպ
իր նշանակութիւնը պահպանիլ է նաև նոր
ժամանակներում։ Նարեկացու մեծութիւնը
ցոյց տուող ամենահետաքրքրական երեւ
ույթներից է այն, որ մեր նոր գրականու-
թեան տարբեր շրջաններում արհասարակ
չի ընդհատուել գրողների ուշադրութիւնը
նրա ստեղծագործութեան նկատմամբ և,
նոյնիսկ աւելին, հետզհետք ուժեղացել այն
Ալլերերգութեան Մատեանսի, իրեւ գեղար-
ուեստական գործի, ըմբռնման ու ճանաչ-
ման խրացման հետ միասին։

թէ ինչն է անցեալի խոշոր գրսպների
ժառանգութիւնից մնում հետագայ զրոյ-
ներին, այսինքն թէ ինչը նրանք կարող են
իրենցից առաջ եղածից օգտագործել և
ինչպէս, դա գրականագիտութեան կարևոր
հարցերից մէկն է: Ինչպէս միջնադարեան
այնպէս էլ նոր գրականութեան մասին խո-
սելի մենք բնաւ մեր խնդիրը չենք համա-
րել՝ Նարեկացին և հետագայ հայ գրակա-
նութիւնը թեմայի կապակցութեամբ Նա-
րեկացու ստեղծագործութիւնից եղած ու-
սումնառութեան օրինակի այդ հարցը բազ-
մակողմանիօրէն շօշափել՝ բոլոր կոնկրե-
տիաստերը մէկ առ մէկ յիշտատկելով: Այ-
ցանկացել ենք նշել միայն մի քանի այն
պիսի փաստեր, որոնք ապացուցում են
հետագայում Նարեկացու ժառանգութեան
օգտագործման հանսաման ու:

Սիջնադպրեան գրականութիւնից զերեւ և ամ բերուած օրինակները արդէն ցոյց են տալիս որ Նարեկացու սաեղծագործութիւնները ամառամբ այն ժամանակուայ գրողների վերաբերմունքը միաստեսակ չէ եղել և չէ էլ կարող այդպիսին լինել։ Մեր նոր գրականութեան փաստեամ աւելի առն ակրն

յայտորէն ցոյց են տալիս, որ տարբեր գաղափարական հոսանքների պատկանող գրողները տարբեր կերպու լրացի են մեկնարանել Նարեկացու ստեղծագործութիւնը և տարբեր առումներով են օգտագործել այս Այսպիսի պարագայում, հասկանալի է, որ ճշմարտութիւնը պէտք է փնտուի մեր դեմոկրատ, առաջաւոր հայեցքների տէր գրողների մօտ:

Հայ նոր գրականութեան մեծ հրմանիր նաշատուր Արովեանի սահեղձագործութեան մէջ շատ հետաքրքրութիւնը կան Նարեկացու ժառանգութեան արագիցիաների հետ ունեցած կապերի իմաստով՝ Այսպէս՝ նախ խիստ ուշագրաւ է Արովեանի ԱԵղասու խալլը վերնագրով եօթ հազարից աւելի տող ունեցող մեծ պոէմը, ինչպէս երեսում է, Արովեանը իր «Վէրք Հայաստանի» վէպը գրելուց առաջ, այդ վէպում մեզ յայտնի թեման և մոտավոր լրը փորձել է արտայայտել յիշեալ պոէմում, որը ժառնով լիրիկական պոէմ է և որը ակնայայտորէն գրուել է Նարեկացու Մատեանի հետեղութեամբ։ Բայց Արովեանը շատ շուրջ զգարկով իր սխալ ստեղծում է էպիկական գործ, իր հանճարեղ «Վէրք Հայաստանի»ն։

Իգէական մեծ բովանդակութիւնը, պատմական և հասարակական կեանքի այն լայն և խորը պատկերը, որ մենք տհոնում ենք հայ նոր գրականութեան հիմնաքարը հասդիսացող այդ վէպում, իրօք անհնար էր բավանդակաւորել Նարեկացու Մատեանի տիպի մի լիրիկական պոէմում։ Ալզատու խաղը պոէմում կան, ի հարեւ, գեղարուեստական տպաւորիչ հատուածներ (ուրնց մի մասը օգտագործուել են հեղինակի կողմէց ԱՎէրք Հայաստանի վէպում), բայց իր ամբողջութեան մէջ այն գորուած է յաջողուած գործ համարել։ Այսպէս՝ պոէտիկական շատ հնարքներ, որոնք հանդիպում են Նարեկացու Մատեանի մէջ և բնականարար կապուած են նրա բովանդակութեան առանձնահատկութիւնների հետ, Արովեանի մօտ նոյնութեամբ կիրառուելով թուրմ ին Պարգէն արուեստական։ Օրինակ՝ նոյնառիթ արտայայտութիւնների անհատում շարքերը։

Քանի մեծանամ ենքոն կզվարբանամ նս ամեն մեկ ըունչ բանիս, առնելիս, Ամեն մեկ ոս առաջ փօխելիս, Ամեն մեկ աչս եղ առաջ զցելիս, Ամեն մեկ տանից գուրս ներս անելիս, Ամեն մեկ լեզուս բերենաւմ շարժելիս, Ամեն մեկ սիրս փորում խաղալիս, Ամեն մեկ արյունա մազիս դիպչելիս, Ամեն մեկ լեզուս առամիս կացելիս, Ամեն մեկ պառս պոռսիս առնելիս ...

«Վէրք Հայաստանի» վէպում, նմանապէս, առկայ է Նարեկացու կուլտուրայի օգտագործման հանգամանքը, բայց այս անգամ արդէն ճիշտ օգտագործման։

Արովեանի կապը Նարեկացու արագիցիանը հետ շատ աւելի բազմակողմանի է, քան թէ այդ սովորաբար պատկերացում է։ ԱՎէրք Հայաստանի վէպում առաջնին հայեացքից նկատում է, ի հարեւ, միայն այն, որ Արովեանի լեզուական ոճի մի քանի գծերը՝ բառերի և նախադասութիւնների կուտակութեամբը, բնածայնութեամբը, չափազանցութիւնները և այլն, յիշեցնում են Նարեկի լեզուի ոճը։ Մակայն այսուղ պիտի չմոռացուի, որ այդ գծերը Արովեանը անմիջապէս ժաղովրդական լեզուից և բանակիւսութիւնից է վերցրել, հետեւաբար Նարեկացու հետ եղած նմանութիւնները նախ և առաջ այն հետաքրքրութեամբ նույն ունեն, որ կարող են կիմք գտանալ պնդելու (և գոյ միանգամայն ճիշտ կը լինի), թէ Նարեկացին, նոյնպէս, իր ժամանակին ժողովրդական բանահիւսութեան լեզուական ոճն է օգտագործել։ Բայց սա, ի հարեւ, գես չի նշանակում, թէ Արովեանը, մանաւանդ իր անմահ վէպը գրելիս՝ բոլորին աչքի առաջ չի ունեցել Նարեկացու լեզուն ։ ԱՎէրք Հայաստանի վէպում հանդիպում են Նարեկի պոետիկական կուլտուրայի օգտագործման բաւականաչափ այնպիսի փաստեր (չնայած ժամանակին տարբերութիւններին), որ թոյլ չին տալիս նման եղբակացութեան յանգելու։

Այսպէս, օրինակ՝ երբ Արովեանը վէպը գրելու ընթացքում զգացմունքի ուժգին թափով բռնաւած տեղ տեղ մզւռում է դէպի ոլիթմիկ արձակը և չափածոն, նա այդ ժամանակ առաւելապէս դիմում է Նարե-

կում իշխող՝ յամբ-անապեստեան հնդկան-
կանի անդամներով հարուստ խորը ստա-
նաւորի չափին։ Վէպում հեղինակի կողմից
արձակ գրուած շատ էջեր նոյնիոն կարելի
է վերածել առաջին անդամ նարեկացու
գործածած յամբ-անապեստեան հրկանդամ
տասց վաճանի ստանաւորի։ Անա մի այդ-
պիսի տողատուած հատուած։

Մթեցեք աշխներկ / տեսէք մեր հալը, (5-5)
Ել ի՞նչ օգոս մեզ / ծեր սուէն ու լալը։
Թաւըր զիսներիս, ման առաջներիս,
Կրակն երեխս, ամփուրն անկելիս,
Բոցն խորովիխս, մեր հոգին տալիս,
Մեր կեսն փարորուած, կեսն անձող զառաւ,
Մեր ոսներն մոխիր, մնչեր կրակուած,
Մեկ ծեռը կրած, մյուսը եերած,
Պղինձ զիսներիս, բարփինց ոսներում,
Մթներում արին, արտասուեն աշխում...

Այսպէս կանոնաւոր գեռ էլի երկար շա-
րունակում է։ Այս հատուածը պատիկա-
կան տեսակէտից միաժամանակ շատ թու-
րոց է նաև նրանով, որ Արովեանը իրար
յաջորդող բազմաթիւ տրտայայտութիւն-
ներով է մի գրութիւն և գաղտփար գե-
դարուեստորէն մարմնաւորում։

Ասացին հայեացքից իսկ նկատուող այս
արտաքին նմանութիւններից բացի, գուուար
է բացառի նաև նարեկացու և Արովեանի
միջն ներքին ինչ ինչ կապերի գոյութիւնը,
ասենք՝ բնութեան պանթէիստական ընկալ-
ման և այլ կողմերում։

Յայտնի է, որ Արովեանը իր վէպում
հանդէս է բերել հայ եկեղեցականութեան
նկատմամբ խիստ քննադատական վիրաբեր-
մունք։ «Վէրք Հայաստանի» վէպի հերոս
Ազատին մի տեղ (իսկապէս արտայայտելով
աշխատաւոր գիւղացու տրտամադրութիւն-
ները հոգեորականութեան վերաբերմաբ)՝
այսպիսի խորհրդածութիւններով գէմ է
արտայայտուրմ եկեղեցական խոստովանու-
թեան խորհրդն։ Ա ես իմ կարճ խելքովս
էնպէս եմ իմանում, որ մարդ խոստովա-
նելիս, ինքը պէտք է իր մեղքի վասու-
թիւնը, իր արած չարութիւնը միտք անի,
փոշմանի, զղչայ, Աստծուն խնդրի՝ որ ի-
րան թողութիւն տա, որ էլ չանի, կարո-
ղութիւն տա, որ իր ճամփիցը չեռանա,

բարի ըլի . . . թէ ինձ վատութիւն ես ա-
րել, պէտք է սրտով իմանաս, ինքով փո-
մանիս, թէ չէ ուրիշի ասելով՝ (այսինքն՝
տերտերին . . . Մ. Ա.) զու հո քու ուզածը
ու քո խորհուրդը չիս թողարք կամ մի
ուրիշ տեղ . . . ա ծո հէնց փող պէտք է տամ,
որ հոգիս գրախութ գնամ։ Տու որ գործք լաւ
չըլի, ես անօրէն ըլիմ, Աստուած նրանց
խօսքովը իմ նոգուս պէտք է թողութիւն
տա՞։ Աղասու այս խօսքերին Արովեանը
անշուշտ համածայն է, իսկ եթէ դա արդ-
պէս է, ուրիշն սրանով որոշ չփման կէտ
է ստեղծւաւմ նարեկացու հետ։

ԺԹ. գարի առաջին կէսում առաջացած
հայկական կլասիցիդ միներկայացուցիչները
որոնք գրում էին գրաբար լիզուսվ, միջ-
նադարեան քնարերգուների նման, բայց
այլ կողմերով, շարունակում են մեծ չա-
փերով օգտագործ ել նարեկացու պոետիկա-
կան կուլտուրան։ Նրանցից ամենահամառա-
ւորը՝ Դեսնդ Ալիշանը, կլասիցիդմի ոնավ
գրած իր թէ՛ կրօնական-բարոյական, թէ՛
պատմական բովանդակութիւնը ունեցող
գրաբար բանաստեղծութիւններում շատ
աեղ նոյնիսկ ուղղակի յիշեցնում է նա-
րեկացուն։ Օրինակ, նրա «Վասն փրկելոյ
յաշնարեական ծովէսո ստանաւորը գրուած
է նարեկի յայտնի օԱլյն զի ծով է ինձ ծփա-
նաց կինցաղոյս բերմունք յոյժ նմանա-
գոյն հատուածի նմանողութեամբ։

Անգետ բարւոյն եւ չարի
Անկեալ ի ծով աշխարհի,
Ուր փորութիկ հուալ բնդ հուալ
Յուրուցանեն ալեծուփ
Մահաարասուռ բիւր կոհակ
ի զաղփաղփուս իմ նաւակի.
Ի նեկ նաւակն իմ մարմնոյս՝
Ոյր առաջնորդ չիք եւ յօյս . . .

Որովհետեւ կլասիցիդմի ներկայացու-
ցիչները մեծ ուշացրութիւն էին դարձնում
ստեղծագործութեան լիզուի հաստորական
փայլի և հնչեղութեան վրայ, ուստի նրանք
շատ բատ էին գոնում իրենց համար օգ-
տագործ ելի նարեկացու արուեստում։ Լիզ-
ուի հնչեղութեան կիմական միջոց կլասի-
ցիդմի հետեւողների համար հանդիսանում
է բաղաձայնոյթը, իսկ այդ տեսակէտից

Նարեկացին կարող էր իրօք, լաւագոյն ուսուցիչը լինել, Ալիշանի վերսիշեալ ուսանաւորում հանդիպում է Նարեկացուց վերցուած և Մահրով բազաձայնոյթ, ինչպէս և առաջին անգամ Նարեկացու գործածած ածիծաղախիտո բառը.

Աւ ծովս ահեղ եւ ծածուկ,
Միծաղախիտ տեսանեմ...

Բայց խնդիրը բացարձակ նմանողութեան մէջ չի. Ալիշանը, ինչպէս և ուրիշները, միանգամայն ինքնուրոյն բազմաթիւ բազաձայնոյթների է ստեղծում՝ շարունակելով և զարգացնելով Նարեկացուն: Ինքնուրոյնութեան տեսակէտից յատկանշական է Ալիշանի Հայրունի բանաստեղծութիւնների շարքը: Սյստեղ նա թէպէտ գրաբար, բայց թաւուինով ու ներչնչմամբ գրուած, բանաստեղծութիւններում բազմաթիւ նոր օրինակների է տալիս բազաձայնոյթների կիրառման: յիշեցի նրա քայլերգները, ուրոնց տողերում իշխում են զ, յ, ո, չ, և և այլ ուժեղաձայն բազաձայններ: Անա Վահան Մամիկոնեանի զօրաց քայլերգը, նշանաւոր «Բա՛մ, փարուտնը»:

Հայկեան փանդուանց որոքնիս դրբնչին
բարբառ մարտարու,
Դառնակոռոչ անդրածայն Պարսիկ կերկեր
ի ենիոր...

Գոռան Կորդրիք, մոնշեն Մասիք, հռըշեն
ստիճանի Երախսայ,
Ի գոսի ի գոսի տալ բիւրուցն ոնանցուի,
Տառնակոռոչ անդրածայն Պարսիկ կերկեր
ի ենիոր...

(*) Այս եօթ առջ ստանաւորին մէջ տեսանը տասնեեօթ սխալ որ կընայ մրցանէլ մը կազմել. որ, բարբառ՝ եղած էր բառ, Կորդրիք կորդիք, Երախսայ՝ Երախս, Պարսակ՝ Պարս, ապառայ՝ պապառ, եալյն, խանճարելով քերթառածին թէ՛ թէ՛ զուն, թէ՛ տաղաջափութիւնն և թէ՛ իմաստը: Լուրջ և մայայն արքէքով հրատարակութեանց մէջ նման վրիպաներուն նկատուած չըլլաւը կը կարծենք թէ կ'արքէ աննկատ չթողոււ:

ԽՄԹ.

Նոյն այս արուեստը (որի մէջ նկատելի է ձեւապաշտական տարրը) կայ Ալիշանի աշակերտ Պէշիկթաշլեանի գրաբար ուսանաւորներում:

Ալիշանը ինքը յետոյ հանդիսանում է մեր այն գրողներից մէկը, որոնք ուժեղ հարուած են հասցնում հայ կեասիցիզմին: Նա իր և Նահապետի երգերով» սկիզբ է դնում աշխարհաբար ուսմանտիկ պաէզիային: Աշխարհաբար գրելիս նոյնակէս Ալիշանը շարունակում է Նարեկացուն օգտագործել (օրինակ՝ «Ճուշանն Շաւարշանայ» բանաստեղծութիւնը), և զրա օրինակ հանդիսանալ ուրիշ բանաստեղծների համար:

1850-60 ական թուականներին՝ հայ հասարական մտքի բուռն զարգացման տարիներին, գրական, գաղափարական սուր պայքարի և բանավէճների հաւազեաի մէջ մի պահ Նարեկացու նկատմամբ ուշադրութիւնը, կարծէք թէ, թուլանում է, սակայն, ի հարկէ, նա ոչ մի ժամանակ չի մոռացնում, և միշտ յիշատակուում է անցեալի մեծ արքէք Կուլտուրայի ներկայացուցիչների շարքում: Ներածականում արգէն յիշատակուել է հայ մեծ ուսուլցիցին դեմոկրատ Նարեկացուն մասին: Սմբատ Շահազդղը իր և Հրաբարակախոս ձայնա գրուածքուում համարիս լինելով՝ մէջբերում է կատարում 1858 թուին և Հիւսիսափայլ ծառում տպուած նազարեանի մի յօդուածից, սրտեղ հեղինակը այս միտքն է զարգացնում, թէ ժամանակի հայ հասարակութեան յառաջդիմութեան նպաստելու համար անհրաժեշտ է նրան ծանօթացնել և իր հին կուլտուրայի հետ, իսկ զրա համար պէտք է կընխոչոր հեղինակների գործերը թարգմանել մեռած գրաբար լեզուից նոր կենդանի լեզուի. Եւյժմուն մեռած է հայի համար իւր սիրեկի Մովսէս Խորենացին, իւր քարտցրախոս Եղիշէն, իւր հոգիացած և հոգեսորուած Գրիգոր Նարեկացին. թող հայերը կենդանացնեն նորանց իւրեանց հայի համարու: Յատկանչական է, որ այսուել Խորենացին և Եղիշէն հոգին գրուում է Գրիգոր Նարեկացին: Խոկապէս, նազարեանի և հրան համակարծիք Շահազդղը ճիշդ լնտրութիւն են կատարել որպէս հին կուլտուրայի մեծագոյն գրողների՝ յիշատակելով այդ երեքին:

Հայրանոսառեղծների հետաքրքրութիւնը դէպի նարեկացու ստեղծագործութիւնը առանձնապէս սկսում է ուժիկանալ 90 ական թուտկաններից, իսկ ի. զարի սկզբներին մասնց մօտ այն ուղղակի պաշտամունքի է վերածում։ Այդ տարիներում նարեկացու իբրև բանասենջի մեծութեան մասին մեր տուաջաւոր գրողները աւելի յաճախ են արտայատում և յափշտակուած ու հիացած ուսւմնասիրում են նրան։ Այս երեսից, ի հարկէ, մի կողմից ընդհանրպէս արդիւնք էր մեր գրականութեան բնական զարգացման, միունքից էլ այն կապուած էր ուսւ և արևմտաերոպական գրականութեան ստեղծած լաւագոյն տրաքիցիաների հետ։ Անկային նոյն այս չըշանութեան նարեկացու մասին արտայատում են նաև յիտքէմ հոսանքներին պատկանող բանաստեղծներին Բանն այն է, որ 90 ական թուտկաններին եւրոպական գրականութեան մէջ բաւական լայն չափերի հասաւ սիմվոլիստական գրական ուղղութիւնը, որը, ինչպէս յայտնի է, իր էսէթեամբ բուրգուական-ուէակցիոն բնոյթ ունէր։ Սիմվոլիստները յանձին Մորիս Մեներլիինքի ստեղծեցին իրենց ուղղութեան փիլիսոփայութիւնը, որի բովանդակութիւնը կազմում էր մահուան ու կործանման մղձաւանջով բռնուած ուէակցիոն կենսահայեցողութիւնը։ Սիմվոլիստները մեծ հակում էին ցոյց տալիք նաև գէպի ֆորմալիզմը։ Հայ բանաստեղծներից մի քանիսը այս կամ այն չափով հետեւցին բաւական աղմուկ հանած այդ գրական ուղղութեանը։ Հստ որում նրանցից ոմանք՝ տուաւել փոքր թիւ և տուաւել քիչ տաղանդ ունեցողները, որոնք ունէին բուրգուական անկումային տրամադրութիւններ, փարում են սիմվոլիզմի բուն էսէթեանը՝ ուէակցիոն բովանդակութեանը, որի մէջ մեծ տեղ էր բռնուում միստիկան։

Այդ կարգի հայ սիմվոլիստները, որոնք համախմբուած էին գլխաւորապէս կ. Պոլոսում լոյս տեսնող և աւաղիկ ամսագրի շուրջը, ամենագուեհիկ մեկնաբանութեամբ՝ աղաւաղելով պատմականութիւնը, փորձում էին իրենց խիստ հակագեղարսւեստական միստիկ-ուէակցիոն գործերի գոյութիւնը արդարացնել՝ յենուելով նարեկացու հեղինակութեան վրայ։ Բուրգուական խաւերի

հետ կապուած նրանց աղճատուած ու մահուան մղձաւանջով բոնուած ներքինը երբեք չի կարող համեմատուել նարեկացու պանիր ու մաքուր հոգու հետ։ Նարեկացու սկզբանցութեան մատեանսին բոլորովին խորթ են այն հիւանդագին հոգեկան հարիւթիւնացինները, որոնք յատուկ են և բորպական և հայ սիմվոլիստներին։ Նարեկացու մօտ բացակայում են ինքնանպատակ ծանր ու մղձաւանջային պատկերներ այնպիսի բնոյթով, ինչպէս օրինակ, դրանք կան, Խորացի օներաշխարհնուում։ Նրա անգամ ամենամուլյ նկարագրութիւնը՝ իրեն իրեն մեռածի պատկերուումը, բնաւ գուրս չի գալիս իրականութեան ճշմարիտ գդացման սահմաններից։

Բայց ամենակարևորն այն է, որ նարեկացու հոչակաւուր Մատեանը գրուած է աւելի քան հազար տարի առաջ, միջնադարում, Փէստլիլիմի պայմաններում և այն տեղ իշխուում է լոյսը և ոչ թէ խաւարը, որ նրա ողբերգութիւնը բիսում է առ կեանքի պահանջմանցից և ոչ թէ ընդհանրապէս կեանքի ժիտուումից, ու վերջանուում է պայծառ լաւատեսութեամբ, և ոչ թէ մռուլ անյուսութեամբ, ինչպէս այդ սիմվոլիստների մօս է։ Մատեանի միմի ածեր ողպրմած ինձ օր տարածամ . . . ո նշանաւու հատուածը միայն բաւական է ցոյց տալու համար, որ անհեթեթութիւնն է նրա հեղինակին ժիթ։ զարի վերջերի մետաբրինոցիան սիմվոլիստների հետ խառնելը։

Մ. ՄԿՐԵԱՆ

(Շարտնակիլի՝ 17)

